

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ

ՄԻՋԵՐԿԻՐԱԿԱՆ(*)

ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԵԱՆ ԱՅՐԵՑՈՒԹԻՒՆԸ

Հնդեւրոպական գաղթականութիւնից առաջ երկրագունդը դատարկ էէր. ամէն տեղ կային զանազան ազգեր ու ժողովուրդներ, ոմանք նոյն իսկ աւելի բարձր քաղաքականութեամբ քան հնդեւրոպացիները: Այսպէս Եւրոպայի արեւմտեան մասում բնակուում էին Իբերները, Հիւսիսում Բլուրիտանացիք, միջին և հարաւային մասերում Լիգուրները, Ետրուսկները, Պելասգները եւն: Այս բոլորի մէջ նշանաւոր էր Միջերկրական կամ Եգէական քաղաքակրթութիւնը, որին պատկանում էին մի կողմից Կրետացիք եւ միւս կողմից Փոքր Ասիայ Արեւմտեան մասի ժողովուրդները, Լիւգիացիք, Լիւկիացիք և Կարիացիք, որոնց լեզուի մասին ոչինչ չգիտենք: Հընդերոպացիք չփութն մէջ մտան այս ժողովուրդների հետ զանազան հանգամանքներով. կամ իբրեւ հարեան, կամ իբրեւ տիրող, եւ կամ գտան նրանց իրենց ճանապարհի վրայ, գաղթականութեան ժամանակ: Այս յարաբերութիւնները չէին կարող ազդեցութիւն չունենալ հնդեւրոպացից լեզուի վրայ. նրանցից սովորելին երկրագործական զանազան գիտելիքներ, ձիադարմանութիւն, նաւաշինութիւն, մետաղագործութիւն եւն: Անշուշտ զանազան բառեր փոխառութեամբ անցան իրենց: Արդ՝ մեզ անծանօթ է այդ ազգերի լեզուն. միեւնոյն ժամանակ լեզուաբանութիւնը միջոց չունի երեւան հանելու հնդեւրոպացիների այն լեզուն, որ գործ էին անում անմիջապէս նախ քան գաղթականութիւնը. ուստի մենք չգիտենք թէ որոնք են այն փոխառութիւնները, որ ոչ-

հնդեւրոպական ժողովուրդների լեզուից անցան հնդեւրոպացիներին:

Առնենք յոյները, իբրեւ մի աւելի մերձաւոր հարեանները, որոնք անցան այն ճանապարհով, որով և հայերը:

Յոյները Քրիստոսից 2000 տարի առաջ նախահայրենիքից իջան դէպի հարաւ եւ շփման մէջ մտան այս ժողովուրդների հետ. իրենք անքաղաքակիրթ ժողովուրդ էին. ուստի անշուշտ շատ բան պիտի սովորէին իրենց նոր և աւելի քաղաքակիրթ հարեաններից:

Երբ քննում ենք յունարէն լեզուի բառարանը, անշուշտ շատ բառ բացատրւում է հնդեւրոպական լեզուաբանութեամբ, շատ բառ պատկանում այն բառազանձին, որ հնդեւրոպական նախալեզուի հարստութիւնն էր կազմում, որ յոյներն էլ իրենց հետ բերին իբրեւ ժառանգութիւն: Իայց մնում են դեռ շատ բառեր էլ, որոնք ոչ միայն մնում են առանց բացատրութեան, այլ և հակառակ են հնդեւրոպական լեզուաբանութեան արմատներին կազմութեան, մասնիկների յարադրութեան եւ բառերի ածանցման օրէնքներին. այս բոլորը համարւում են նոյն ժողովուրդներից փոխառւած բառեր:

Օրինակ լարիքիձթոս բառը, որ ըստ նիւթի էլ պատկանում է արդէն Կրետէին և Եգիպտոսին, հնդեւրոպական երեւոյթ չունի, նրա մէջ գտնուած ինքո մասնիկը գտնւում է մի քանի յատուկ անունների մէջ, ինչպէս Կորկոս, Սալիկոս, Անա-րիկոս, Տիւրիկոս, կան նաև հասարակ անունների մէջ, ինչպէս լիքիկոս, երե-րիկոս, հիւալիկոս եւն:

Այս բոլոր Միջերկրական փոխառութիւններ են յունարէնի մէջ:

Նման փոխառութիւն են կիւպարիստ, որից՝ հայերէն կիւպարիս (նոճի), որի մէջ իստա եզրական մասնիկ է. բազմապէս խաղերից թրիստոս, որի հետ նաև խալիս և յիթրամֆ:

Փոխառու է համարւում նաև վաք-ըր, որ տուել է յունարէն, լատիներէն եւ պորտուգէզէն բառերը եւ այս վերջինից էլ հայերէն վարդ:

Նորագիւտ կամիոներէն (հաթեան) լեզուն էլ ունի զանազան այսպիսի փոխա-

(*) Պրոֆ. Ն. Անտոնանի Պատմութիւն Հայերէն Լեզուի Ս. Թարգմանաց-Գուրեան մեցանակով պատկոյած գործին Գ. զլուխը:

ռուսները, որոնք սակայն դեռ չեն ուսումնասիրում արտաշահ ձևով:

Մեզ հետաքրքրող Միջերկրական բառերից յիշենք հետևյալները:

1. Գլխիկ. — Հնդկերկրացիք բնակուելով ուելի հիւսիս, չէին ճանաչում խաղողը և գինի պատրաստել չգիտէին: Որթառուների մշակութիւնը և խաղողից գինի պատրաստելու կուլտուրան ծանօթ էր սակայն Միջերկրականի հին քաղաքակիրթ ժողովուրդին, որից անցաւ Սեմականներին. այսպէս էր. յայն, Իթուպ. վինն, արաբ. վայն, ասուր. ինու, իսկ ընդհանուր սեմական նախալեզուով վայնու: Խաղողի մշակութիւնը ծանօթ էր Եգիպտոսացի Ն. Բ. 4րդ հազարամիակում, իսկ հարաւ արեւելեան Եւրոպայում Ն. Բ. 1700—1500 թուերին: Հնդկերկրացի ժողովուրդները նոյնը փոխ առին ուղղակի Միջերկրացիներից. այսպէս յն. յինու, ալբան. վինը, լատ. վինում և հյ. գերմ. Լատի. նախալեզու փոխառութեամբ բառը անցաւ կելտական և գերմանական խմբին, (գոթ. վինն, հրգ. վին, գերմ. վայն, անգլ. ալան, հիւլ. ֆին, կիմր. գրին), գերմանականից էլ բալտիկ-սլաւական խմբին. այսպէս լիթ. վինաս, հւլ. վինու, ուստ. վինու: Աւելի յետոյ հնդեւրոպականներից բառը անցաւ ոչ-հնդեւրոպական լեզուներին. ինչպէս սլաւականից մորզլին. վինա, իսկ հայերէնից էլ կովկասեան զանազան լեզուները. ինչպէս վրաց. ղվինի, ղվինու, մինգր. ղվինի, լազ. ղլինի, ղլին, ինգուր. ղլինն, սաւան. ղվինն, ղլին, ինգուր. ղլին, ուստ. ֆի, ֆիննի, ափսաղ. ագֆլ, Նախ քան գերմի ներմուծումը հնդեւրոպացիք իբրեւ ոգիւլից լմպելիք գործածում էին մեղրաբուրը, որ կոչւում էր վնդու: — գերմի ներմուծումից յետոյ մեղրաբուրի գործածութիւնը, միայն հետ նաև բառը ջնջուեց կամ առաւուսին ստացաւ «գերմի նշանակութիւնը»: Հայերէնի մէջ բոլորովին վերացել է, մնում են միայն յն. վեքի, հրգ. վեք, իբլ. վիդ:

2. Զիքեկի և իւլ. — Հնդեւրոպացիք ունէին կենդանական իւլ, բայց բուսական իւլ չունէին: Որթառուների մշակու-

թեան նման կարեւոր և Միջերկրական քաղաքակրթութեան ծանօթ էր ձիթնու մշակութիւնը և նրանից էլ իւլի կամ ձիթի պատրաստութիւնը: Յոյները հարաւում ճանաչեցին ձիթնին և ձիթը. միջերկրական նախածը յայտնի չէ, բայց նրանից են ծագում փոխառութեամբ մի կողմից յն. էլլոն, էլլա և միւս կողմից հայ. իւլ, որի հնագոյն ձևն է իւլ, ժողովրդական նախալեզու փոխառութիւնը: Յունարեւելից փոխ առին յաւիտները՝ ոլեու, ոլիու, ոլես, ոլիս և կելտից և որից էլ գոթ. ալես, հրգ. ոլեյ, գերմ. էոյ, հւլ. օլեյ, լիթ. ալիս, ալբան. ուլի, Աւելի ուշ հնդեւրոպականներից անցաւ ոչ-հնդեւրոպական լեզուներին. այսպէս սլաւականից հունգ. օլայ և հայերէնից թուրք թուրական իւլ:

3. Խնձոր. — Այս պտղի համար երկու գլխաւոր բառ կայ հնդեւրոպական լեզուներին մէջ. հիւսիսային և արեւմտեան Եւրոպայի լեզուները ներկայացնում են մի ձև, որ է հւլ. արլի, լիթ. որուս, հրգ. ափուլ, հիւլ. արալ, անգլ. ապլ, հիւլ. էպլ, հայրուս. վորլ. սրանց հետ նոյն է նաև Կամպուիոյ Արիլա քաղաքի անունը, որ բուն նշանակում է խնձորաբեր (Ոսկերի լեզուով): Այս բառը փոխառեալ է եւրոպական ոչ-հնդեւրոպական մի լեզուից, որ խօսւում էր նախ քան հնդեւրոպացոց տարածումը: Հարաւային Եւրոպայում ունինք յն. վեքի, զոր. վալե, կամի. մանիս և լատ. մալու. այս բառը Միջերկրական լեզուի բառ է և անշուշտ ներկայացնում է մշակուած բնական խնձորի մը տեսակը, որ Միջերկրացիներից անցաւ յոյներին, փոխանակելով նախկին հասարակ տեսակը: Հայերէնը չի ճանաչում ոչ արլի և ոչ մալու և ոչ ալ ունի խնձոր, որ նոյնպէս հնդեւրոպական չէ և ապոստոլաբար փոխառեալ է Հայաստանի բնիկ խաղիկներից:

4. Թուլ. — Այս բառի հետ նոյն են յն. իւլի, սլաւոն. սլաւոն և լատ. ֆիլուս հոմանիշները. բոլորն էլ փոխառեալ Միջերկրական աղբիւրից: Յայտնի է որ Թուլ չի ածում հիւսիսային երկրներում, բայց շատ առատ է Միջերկրականի լրջանում:

5. Առիւծ. — Այս անասունը հենց նոր քարի շրջանին Եւրոպայի ամենամեծ մասից վերացած էր. չկար նաև հնդեւրոպական նախահայրենիքում. այս պատճառով էլ հնդեւրոպական լեզուների մէջ մի եւ ընդհանուր բառ չկայ առիւծի մասին. Աւետարանում դեռ առիւծ չէ յիշուում: Սանսկրիտը ունի սինհա բառը, որի հետ միանում է ծագմամբ հայերէն ինձ. այս երկուսը միասին ենթադրում են հնիս. սինդհու ձևը, որ աշուշտ փոխառնալ է մի աշ-հնդեւրոպական հին լեզուից: Եւրոպական լեզուներում շատ տարածուած է մի ուրիշ բառ, որ լտ. լեռ, հրգ. լիւտ, նրգ. լեովի, լիթ. լիւսա, հայ. լլոր, միուլ. լեռ, հիւմր. լեռ և յն. լեռն, լիս ձևերն ունի: Սրանց բոլորի մայրն է յունարէնը, որից փոխառնալ է լատինը և սրանից էլ բոլոր միւս եւրոպական ձևերը: Բայց յունարէնն էլ փոխառնալ է Միջերկրական լեզուից, որից ծագել են նաև եբր. լափշ, լափյ, եգիպտ. լափու եւն.:

Բալկաններում դեռ կային առիւծներ, ինչպէս որ Հերոդոտը յիշում է Քսերքսէսի ժամանակ Մակեդոնիայում (Է. 125): Հայերի իրենց ճանապարհի վրայ գտան առիւծը և տուին նրան այս անունը հանե. լով հնդեւրոպական ընդ արմատից որ նը-շանակում է մոռնել, Առիւծը գերազանցապէս մոռնող գազան է:



ԽՈՐՀՈՒՐԳ ԵՒ ԽՈՍԹ

Պօսելու սեղ լույս, արածուելու սեղ ամ-փոփոխիլ գիտնալը երջանիկ յաջութիւն մ'է, գոր իիլ մարդիկ արդարութիւն ունին ձեռք յեռելու: Երեւան ելնելուն պէս, ինգիլիսիկն իւրապէս անձնատուութիւններ կը կարծեն, և զժախսաբար այդ յանձնարարութեան փառհուրքիւն է որ զանոնք կ'արգիլէ իրենց ճշմարիտ արժանիքի զգացումին փայ հաստատուած համոզում մը ստանալէ, օգտուելէ այն ամէն քանակէն զորս պիտի լուսային իւրացնել, հարստանալի օգտակար խրատներէն զորս իրենց պիտի տային փորձառութիւնն ու իրենց վերաբերմամբ զոյացած շահագրգռութիւնը:

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՁԻ ՀԻՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

(Շար. Սիւն 1935, էջ 258 էն)

Այս աշխատանքը սակայն չէր բաւեր Յերոնիմոսի: Արեւելք կատարած իր երկրորդ ճամբորդութեան ժամանակ, զոր ձեռնարկից Դամասոս պապին մահէն յետոյ (384), վերջնականապէս Բեթղհէմէ հաստատուելու համար, Որոգինէսի վեց-իջնանները ուսումնասիրելու համար օգտուեցաւ Կեսարիոյ մէջ իր բնակութենէն: 386 էն վերջ. այս օրինակին համաձայն ուղղութիւններ կատարեց Հին Կտակարանի բազմաթիւ գրեանց, թերեւս ամենուն վերայ, մանաւանդ Սաղմոսարանին վրայ. խնամք տանելով նաև նոյն իսկ զեւր. վեց-իջնան բնագրին աստղադիւրերն ու բրգա-ձևերը: Յերոնիմոսն այս նոր Սաղմոսարանը անմիջապէս ընդունուեցաւ ի Կոլուս. և որ անուանակոչուեցաւ Psalterium gallicanum: Ան եղաւ Հռոմէական ժամապըրքին և Վուլկադային Սաղմոսարանը: Հին Կտակարանի այս երկրորդ վերաքննութենէն, Սաղմոսարանէն զուրս, միայն Յոբայ վերքն է որ կը պահուի: Միւս կողմանէ, մինչ այսպէս կը վերաքննէր Հին Կտակարանը, Յերոնիմոս որոշած էր եւրոպացիներին վրայ կատարել նոր թարգմանութիւն մը: Այս թելադրութիւնը իրեն տուած են իր բարեկամներն, օրոնք կը խնդրէին իրմէ պատրաստել լատիներէն բնագիր մը որ լիապէս յարմար ըլլար սկզբնապրին: Այս խնդրանքը կը համաձայնէր երբայական բնագրին համար միշտ աճող իւր նախափութեան: Անկէ զատ, նոր թարգմանութիւն մը իրեն կը թուէր թէ յարմար պիտի ըլլար հայթայթելու արդիւնաւոր նոր զէնքեր հրէից հետ այն վիճաբանութիւններուն մէջ որ միշտ տեղի կ'ունենային: Բեթղհէմէ իր միայնութեան խցիկին մէջ 390ին սկսաւ Հին Կտակարանի թարգմանութիւնը աւարտելու համար